ցել է դպրատուն (որտեղ սովորել է Մ. Աբեղյանը), ձիթհան, ջրաղաց և այլ շինություններ։ Վանքի պատերին կան յուղաներկ պատկերներ, պարսպին, գերեզմանաքարերի վրա արված են արձանագրություններ, ճարտարապետական մեծ արվեստով կերտված քանդակներ։ Դմբեթի 8 պատուհանների միջև և նրանցից ներքև Աստվածածնի և 12 առաքյալների զարդապատկերներն են, սեղանը զարդարված է Տիրամոր պատկերով։ 1840 թ. երկրաշարժից հետո վերակառուցվել է եկեղեցու զանգակատան պատը, քանդվել և վերացվել է ձիթհանը, ջրաղացը, խարխլվել է պարիսպը։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՄՈՒՇՆԵՐ

Երևանի հյուսիսային ծայրամասում, ուր հատվում են Ավանի և Քանաքեռի խճուղիները, 1969 թ. հողային աշխատանքների ժամանակ, 3—4 մ խորության վրա, խճուղային ճանապարհների վարչության աշխատակից Գ. Մ. Հովհաննիսյանի կողմից հայտնաբերվեց հողափոր դամբարան։ Այս դամբարանը հետազոտվել է Ռ. Բ. Պիոտրովսկու և Գ. Հ. Միքայելյանի կողմից։

Դամբարանում հայտնաբերվել էին խեցեղեն իրեր, բրոնզե դաշույն, ոչխարի և եղջերուի ոսկորներ[1]։ Մարդու աճյունի բացակայությունը, ըստ երևույթին, բացատրվում է դիակիզումով, որը բնորոշ էր Կիրովականի, Լճաշենի, Թրիալեթիի, Ղրղիի և այլ վայրերի գունազարդ խեցեղեն պարունակող դամբարաններին։ Գտնված խեցեղեն առարկաները իրենց ձևերով բաժանվում են երկու տիպի՝ խոշոր, մոնոխրոմով գունազարդ սափորներ և մեծ, խոր, կարմիր և մոխրագույն քրեղաններ, որոնց մեջ աչքի է զարնում մեկ գունազարդ քրեղանը։ Գտնվել է նաև ձեռքով պատրաստած կոպիտ, փոքր, մուգ մոխրագույն թաս հիշեցնող աղաման (նկ. 9)։

Առաջին խմբի գունազարդ ամանները քիչ երկարուկ երեք սափորներ են, որոնք իրարից տարբերվում են չափսերով և նախշերով։ Բոլոր սափորները պատած են վառ կարմիր անգոբով։ Անոթների վզերից ներքև ձգվում են սև ներկով արված խոշոր շեվրոններ՝ լցված ուղիղ և ալիքաձև գծերով, շուրթերը զարդարված են թեք գծիկներով։ Անոթներից մեկի շեվրոնների ստորին ծայրերը զարդարված են շրջանաձև նախշերով և դրանցից իջնող օձերի զարդամոտիվներով։ Վերջիններիս գլուխները ձուլված են նշված շրջանների հետ (նկ. 2)։ Երկրորդ անոթի վրա շրջանաձև նախշերը հանդես են գալիս ոչ թե շեվրոնների ծայրերին, այլ ելուստների միջև (նկ. 3)։ Երրորդ անոթի վրա շրջանաձև նախշի փոխարեն արված են արևապաշտության նշաններ՝ սվաստիկաներ (նկ. 1)։ Արև խորհրդանշող այսպիսի նշաններ Հայաստանում հայտնի են էնեոլիթյան ժամանակաշրջանից. սակայն նրանք լայն տարածում են ստանում մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսից և I հազարամյակում հանդիպում են Լճաշենի, Արթիկի, Սևանի, Կիրովականի, Ռեդկին-Լագերի և այլ հուշարձաններում[2]։

Առաջին անգամ չէ, որ Երևանում և նրա շրջակայքում գունազարդ անոթներ են հայտնաբերվում. հայտնի են Մուխանաթ-Թափայի, Ծիծեռնակաբերդի, Կիրզայի, Թազաքենդի միագույն խեցեղենի նմուշներ, որոնք զարդարված են պարույրներով, ալիքաձև ցանցերով, զույգ սակրերով, անկյուններով, խաչերով, գծիկներով լցված ուղղանկյուններով և այլ նախշերով[3]։ Նշված նյութերը թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով, երբ լեռնային անասնապահությունը ապրում էր իր ծաղկման ժամանակաշրջանը։ Ցեղային ավագանու ձեռքին կուտակվում էր մեծ քանակությամբ հարստություն, որի մի մասը թաղման ժամանակ դրվում էր նրանց դամբարաններում։

Ցեղային ավագանու դամբարաններ բացվել են Կիրովականում, Թրիալեթիում, Լճաշենում և դրանց մեջ գտնվել են ոսկե և արծաթե զարդարուն թասեր, գավաթներ և զենքեր, գունաշարք խեցեղեն, որոնք բացահայտում են չափազանց բարձր տեղական մշակույթի առկայությունը և նրանց ունեցած կապերը Հին Արևելքի և հատկապես Խեթական թագավորության մշակույթի հետ։

---

[1] Որոշել է Ս. Մեջլումյանը։

[2] С. А. Есаян. Амулеты, связанные с культом Солнца из Армении, СА, 1968, № 2, էջ 255 և հտ.։

[3] К. Х. Кушнарева, Тазакендский могильник, СА, 1960, № 1, էջ 139; Э. В. Ханзадян, Лчашенский курган № 6, КСИА, в. 91, 1961, էջ 68; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 47; С. А. Есаян, Ереван, Ереван, 1969, էջ 27, 41, Ս. Ա. Ամիրյան. Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 268—275։

Մեր պատկերացումները գունազարդ խեցեղենի մասին չեն սահմանափակվում միայն վերոհիշյալով։ Պետք է նշել գունազարդ խեցեղենի տված այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Գառնին, Ղրղին, Նախիջևանի Քյուլ-Թափան, Ուզերլիկ-Թեփեն, Զուրտակերտի դամբարանադաշտերը և ուրիշներ։

Իբրև նորահայտ նյութեր Հայաստանում անհրաժեշտ է նշել Թ. Խաչատրյանի հայտնաբերած Հառիճի գունազարդ խեցեղենը և Գ. Արեշյանի նյութերը Ոսկեվազից, ուր հայտնաբերվել են հոյակապ գունազարդ անոթներ, զարդարված շևրոններով, պարույրներով, ցանցով, գույդ սակրերով և այդ ժամանակին բնորոշ այլ նախշերով[4]։

Հետաքրքիր գունազարդ անոթներ են հայտնաբերվել Ա. Քալանթարյանի և Ժ. Խաչատրյանի կողմից Մարտունու շրջանի Լիճք, Դետաշեն, Ծակ-քար և Վարդենիսի շրջանի Ակունք դյուղերում։ Այստեղ հայտնաբերված խեցեղենի մեջ աչքի է ընկնում մի գունազարդ անոթ, որը զարդարված է այծյամների և եղջերուների պատկերներով։ Վերջիններիս հետապնդում են գայլերը, իսկ նրանց դիմաց շարժվում են թռչունները։



Նման զարդամոտիվները առաջին անգամ են հանդիպում խեցեղենի վրա և, ինչպես ճիշտ նշում են հեղինակները, կապված են Գեղամյան լեռների, Արագածի և Սյունիքի ժայռապատկերների տեսարանների հետ[5], թեև առանձին կենդանիների պատկերներ կային դեռևս Գառնիից, Էլարից և Նախիջևանից գտնված անոթների վրա[6]։ Կենդանիների պատկերով գունազարդ խե-

[4] Նյութերը չեն հրապարակված։

[5] Ա. Ա. Քալանթարյան, Ժ. Դ. Խաչատրյան, Հնագիտական հազվագյուտ հայտնագործություն Սևանի ավազանից, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1969, № 4, էջ 75։

[6] Э. В. Ханзадян, Лчашенский курган № 6, էջ 69; Նույնի՝ Расписной сосуд

ցեղեն է գտնվել նաև Հարավային Թուրքմենիայում, Կենտրոնական Իրանում և այլ վայրերում[7]։

Երևանի դամբարանները սովորական, շարքային են և նրանց մեջ գտնված խեցեղեն առարկաների երկրորդ խումբը ներկայացված է չորս կարմիր և մուգ մոխրագույն, գրեթե շագանակագույն քրեղաններով, որոնք ունեն բարձր, դեպի վեր փոքր-ինչ կլորացող իրան և փոքր կլոր շուրթ։ Բոլոր անոթները կոպիտ են, հաստ պատերով և չունեն որևէ զարդ, եթե չհաշվենք երկու քրեղանների շուրթերի տակով անցնող թույլ բաշված գծերը (նկ. 4—6, 8)։ Նման քրեղաններ հայտնի են Կիրովականի, Էլարի և Լճաշենի դամբարանների պեղումներից, ուր հայտնաբերվել են մեծ քանակությամբ նման «խոհանոցային» անոթներ։

Ինչպես վերը նշեցինք, իր ձևով այս խմբին է մոտենում ևս մեկ քրեղան, որը առաջիններից տարբերվում է իր գունազարդ նախշերով։ Սա նույնպես կարմիր անգոբապատ է, բայց վատ թրծման հետևանքով տեղ-տեղ ունի սև բծեր (նկ. 7)։ Անոթի շրթից իջնում են իրար միացած կիսակլոր գծեր, որոնց ներսում նկարված են նույնպիսի երկուական գծել։

Քննարկվող ժողովածուի վերջին առարկան խոշոր եռանիստ բրոնզե դաշույնն է, որն ունի կլոր ուսեր, տափակ լեզվակ (նկ. 10)։ Լեզվակի և ուսերի վրա կան երեք անցքեր՝ փայտե կամ ոսկրե բռնակը ամրացնելու համար։ Իր ձևով այս դաշույնը նման է Հայաստանում հայտնի սակավաթիվ դաշույններին, որոնք գտնվել են Էլարից, Կիրովականից, Ղրղիից, Գորիսից և թվագրվում են մ. թ. ա. XVII—XV դդ.։ Խեցեղենի ձևերից և զարդամոտիվներից ու դաշույնի համադրումից պարզվում է, որ Երևանում գտնված ժողովածուն մերձենում է Հայաստանի և Անդրկովկասի նույն ժամանակի հուշարձաններին։ Սակայն նա բնորոշ է գունազարդ խեցեղենի ուշ շրջանին և մոտենում է Կիրովականի խմբին, մի հանգամանք, որը հնարավորություն է տալիս թվագրել մեր իրերը մ. թ. ա. XVII—XV դդ.։

Գունազարդ խեցեղենի նոր գյուտերը Երևանում (Միծեռնակարերդ, Կիրգա, Ավանի խութի), Հառիճում, Ոսկեվազում, Սևանի ավազանում զգալի կերպով հարստացնում են մեր պատկերացումները Հայկական բարձրավանդակի միջին բրոնզեդարյան մշակույթի մասին։

Միաժամանակ պետք է նշել, որ այդ խեցեղենը հանդիպում է Վրաստանի Հայաստանին սահմանակից շրջաններում (Թրիալեթի, Ռուսթավի, Գրինվի)։ Այդ խեցեղենն առավել հարուստ է ներկայացված ժամանակակից Ադրբեջանի արևմտյան մասերում, որը մատնանշում է այս մշակույթի տարածման սահմանները։

Այժմ որոշակիորեն պարզ է դառնում, որ թեև զարդամոտիվների մի մասը աղերսներ ունի առաջավորասիական աշխարհի հետ, իսկ կենդանակերպ նախշերով անոթները Իրանի և Միջին Ասիայի հետ, սակայն մշակույթի արմատները, ինչպես վաղուց ցույց են տվել Բ. Ա. Կուֆտինը և Բ. Բ. Պիոտրովսկին[8], պետք է փնտրել տեղում։ Այս տեսակետից անհրաժեշտ է նշել, որ գունազարդ անոթների զարդամոտիվները իրենց զուգահեռներն ունեն վաղ բրոնզեդարյան (մ. թ. ա. III հազարամյակ) սև փայլեցրած խեցեղենի զարդերի մեջ։ Բացի դրանից, անոթներն ունեն ուրույն տեղական ձև։ Այս հանգամանքները հնարավորություն են տալիս ենթադրել, որ միջին բրոնզի գունազարդ խեցեղենի արմատները սասնում են մ. թ. ա. IV հազարամյակը։ Վաղ էնեոլիթյան գունազարդ խեցեղենը մեզ լավ հայտնի է Թեղուտում, Նախիջևանում, Մուղան-Ղարաբաղյան դաշտում գտնված նմուշներից։ Այս հետևությունը ավելի հավանական է դառնում, եթե հիշենք, որ վերջին տարիներս վաղ բրոնզեդարյան սև խեցեղենի հետ մեկտեղ Շենգավիթում, Հաղացատեղում (Նոյեմբերյանի շրջան), Գյոյ-Թեփեում, Խարբերդ-Մալաթիայում և Բեշտաշենում[9] հայտնաբերվել են նաև գունազարդ անոթներ։ Վերը նշված գունազարդ անոթները հիմնականում զարդարված են բաց ֆոնի վրա սև ներկով արված գծազարդերով։ Միայն Շենգավիթում գտնված գունազարդ անոթներն ունեն հարուստ հարդարանք (արագիլներ, օձեր, եռանկյուններ, ալիքաձև գծեր, ցանցազարդ)։

Վաղ բրոնզի դարաշրջանի գունազարդ խեցեղենը կապող օղակ է վաղ էնեոլիթյան և միջին բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի միջև։

Ս. ԵՍԱՅԱՆ, Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

с зооморфными изображениями из Элара, СА, 1966, № 4, էջ 72; В. Г. Алиев, Новые материалы о культуре расписной керамики в Азербайджане, СА, 1967, № 1, стр. 117.

[7] И. Н. Хлопин, Изображение коровы на сосуде из Кара-тепе, КСИИМК, в. 69, 1957, էջ 136—138։

[8] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 4—10; Б. Б. Пиотровский, Археология Закавказья, էջ 49։

[9] Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 214, 219։ Barton-Broun, Excavations in Azerbaijan, London, 1951, էջ 35—45; C. Burney, Eastern Anatolia in the chalcolithic und Erli Bronze Age A. S. V., էջ 205; Լ. Վ. Խանզադյան, Գառնի, պր. IV, Երևան, 1969, էջ 38։ Բ. Ա. Կուֆտին, Նշվ. աշխ., էջ 112, 116—117։